

կած գրքերն են. ինչու որ Յովնան Եպ. երկար ատեն Իտալիա ապրելով՝ 1724—1727 իրեն թարգմանած կամ յօրինած հինգ գրքերն տպագրել տուած է ի Վենետիկ եւ ի Հռոմ:

Այս գրքերու վրայ մանրամասն տեղեկութիւններ կը դնեմ:

1. Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց. Եւ հրաշալեացն սրբազնուէ: Արտահանեցեալ ի հոգեւոր գրեանց, եւ յեկեղեցական պատմուէնց իտալիականաց, եւ ժողովապէս ի հայկական բարառն շարադրեցեալ, աշխատութիւն Յոհանու Եպնին Թօխաթեցւոյ: Տպագրեցեալ, եւ ի լոյս ածեցեալ հոգաբարձուք եւ սրբագրութիւն նոյնոյ Եպնին, ի փառս Այ... ի հայրապետուէ Տն Աճատրոյ, ամենից հայոց կաթողիկոսի: Յամի Տն 1724. ի Մարտի 9. ի Վենետիկ. ի տպարանի Անթոնի Պօռթօլի: Հրամանաւ Մեծաւորաց, եւ Փռիվիլեճիով Գերազանցագունեղի ծերակուտի:

Մեծուի տպագրուէ $4\frac{1}{2} \times 7\frac{1}{2}$, էջ 1—576:

2. Վարք երանելոյն սրբոյն Յօհաննիսին Այ, հօրն աղքատաց եւ հիմնողին սրբազանի կարգին հիւրանոցաց եւ հիւանդանոցաց, բարի եղբարք կոչեցելոց: Գրեցել յուսմանէ կրօնաւորէ Յնեան կարգէ, կարգաւ վայելչագունիւ եւ պարզ շարագրութիւն: Արտահանեցել ի լեզուէ իտալիանականէ, եւ ի հայկական բարառն շարադրեցեալ աշխատութիւն Յովնանու Եպիսկոպոսին Սեբաստիոյ Յամի Տեառն 1724 ի փառս Այ. ի պատիւ մօր Տն եւ Յօհաննիսին Այ ի Վենետիկ, ի տպարանի Անթոնի Պօռթօլի: Հրամանաւ Մեծաւորաց եւ Փռիվիլեճով Գերազանցագունեղի ծերակուտի:

Մեծ. տպ. $8^3 \times 5$, էջ 1—322:

Էջ 1 ճակատ: